ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2025 թվականի N 1372 - Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ և 57.1-ին կետերի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանին կատարել փոփոխություն Շենավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման աշխատանքների նպատակով «ՄՄՎ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-107/22» ծածկագրով գնման պայմանագրում՝ կատարելով պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալների ավելացում՝ պայմանագրի ընդհանուր գնի 12,65 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանին կատարել փոփոխություն Կաթնաղբյուր բնակավայրի

մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նպատակով «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի հետ 2024 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ «ՀՀ ԱՄ ԹՀ-ԲՄԱՇՁԲ-24/84» ծածկագրով գնման պայմանագրում՝ կատարելով պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալների ավելացում՝ պայմանագրի ընդհանուր գնի 18,43 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանին կատարել փոփոխություն՝ Աշնակ բնակավայրում ասֆալտ-բետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքների նպատակով «Թալին ԱՏՁ ՓԲԸ ՄՕԴ Քնսթրաքշն ՍՊԸ» կոնսորցիումի հետ 2024 թվականի հուլիսի 31-ին կնքված՝ «ՀՀ ԱՄ ԹՀ-ԲՄԱՇՁԲ-24/73» ծածկագրով գնման պայմանագրում՝ պայմանագրով նախատեսված որոշ աշխատանքները փոխարինելով այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ պայմանագրի ընդհանուր գնի 20,3 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

4. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանին կատարել փոփոխություն Տարոնիկ բնակավայրում խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նպատակով «Արմենասա ՍՊԸ» - «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ կոնսորցիումի հետ 2023 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված՝ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/85» ծածկագրով գնման պայմանագրում՝ պայմանագրով նախատեսված որոշ աշխատանքները փոխարինելով այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ պայմանագրի գնի 30,04 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

5. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանին կատարել փոփոխություն Անուշավան և Վարդաքար բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքների նպատակով «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ»-ի հետ 2024 թվականի օգոստոսի 7-ին կնքված՝

«ՇՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/32» ծածկագրով գնման պայմանագրում՝ պայմանագրով նախատեսված որոշ աշխատանքներ փոխարինելով այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ պայմանագրի գնի 68.0 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ